ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2022 թվականի N 2113 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄ-ՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ կետին, 9-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ և 16-րդ կետերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն

որոշման ցուցանիշներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 և 11 հավելվածների:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 7 աղյուսակում «Ընդամենը» տողում «25,388,827.9» թիվը փոխարինել «26,154,756.5» թվով, «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» տողում «6,940,393.6» թիվը փոխարինել «7,706,322.2» թվով, «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» տողում «5,420,415.6» թիվը փոխարինել «6,186,344.2» թվով, 1157 «Քաղաքային զարգացում» ծրագրի տողում «5,412,315.6» թիվը փոխարինել «6,178,244.2» թվով, 1088 ծրագրի 12011 միջոցառման կատարողի տողում «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն» բառերով, ինչպես նաև 1157 ծրագրի 12009 միջոցառումից հետո լրացնել նոր միջոցառում հետևյալ բովանդակությամբ.

«

12025	Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում	765,928.6
	այդ թվում՝ ըստ կատարողների	
	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	765,928.6

»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման N 5 հավելվածի N 6 աղյուսակներում «Ընդամենը» տողում «1,679,130.7», «3,954,382.4», «6,320,465.3» և «7,652,268.1» թվերը փոխարինել «5,779,316.4», «12,214,246.4», «18,739,377.0» և «26,154,756.5» թվերով, «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» տողում «1,679,130.7», «3,927,922.1», «6,261,974.1» և «7,652,268.1» թվերը փոխարինել «1,674,316.4», «3,995,886.4», «6,404,317.0» և «7,706,322.2» թվերով, «ՀՀ տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» տողում «1,375,560.0», «3,241,390.0», «5,152,440.0» և «6,048,731.2» թվերը փոխարինել «1,370,745.7», «3,309,354.3», «5,294,782.9» և «6,186,344.2» թվերով, 1157 «Քաղաքային զարգացում» ծրագրի տողում «1,372,800.0», «3,236,200.0», «5,145,600.0» և «6,040,631.2» թվերը փոխարինել «1,367,985.7», «3,304,164.3», «5,287,942.9» և «6,178,244.2» թվերով, 1157 ծրագրի 12025 միջոցառման համապատասխան տողերում «158,000.0», «315,000.0», «470,000.0» և «628,315.6» թվերը փոխարինել «153,185.7», «382,964.3», «612,342.9» և «765,928.6» թվերով, ինչպես նաև «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» տողում «0», «26,460.3», «58,491.2» և «83,558.9» թվերը փոխարինել «4,105,000.0», «8,218,360.0», «12,335,060.0» և «18,448,434.3» թվերով, 1088 ծրագրի 12011 միջոցառման կատարողի տողում «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման NN 9 և 9.1 հավելվածների համապատասխանաբար NN 9.10 և 9.1.11 աղյուսակներում 1059 ծրագրի 11003 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, գրանցամատյանների վարում, օրիգինատորների հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում, հայտ» և «Բույսերի նոր սորտերի տեղեկագրի և գրանցամատյանի հրապարակում, էջ» տողերը, NN 9.5 և 9.1.5 աղյուսակներում 1080 ծրագրի 31001 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Տվյալ բյուջետային տարվան նախորդող երեք տարիների ընթացքում տրանսպորտային սարքավորումների ձեռքբերման վրա կատարված գումարային ծախս, հազար դրամ» տողը, լրացնել «Համակարգչային սարքավորումների քանակ, հատ», «Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ» և «Դատարանի համակարգչային տեխնիկայի բարելավում, տոկոս» տողերը, N 9.7 աղյուսակում «1212 Տարածքային զարգացում» ծրագրի

«12007 ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման գծով հաստատված

«

ՀՀ խոշորացված համայնքների թիվ, հատ	70

»

տողը հանել, իսկ NN 9.3 և 9.1.3 աղյուսակներում՝

-1158 ծրագրի 11010 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Պահպանվող հատուկ և կարևորագույն օբյեկտների թիվ, հատ» տողը,

-1158 ծրագրի 31001 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ» տողը,

-1213 ծրագրի 11004 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակ, հատ» տողը,

-1213 ծրագրի 11005 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Թեթև արդյունաբերության արտադրանքի նորմերի համապատասխանության տարեկան ստուգումների քանակ, հատ» տողը,

-1213 ծրագրի 31001 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Գրասենյակային գույքի միավորի քանակ, հատ» և «Աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բարելավում, տոկոս» տողը,

-1213 ծրագրի 31002 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Գրասենյակային գույքի միավորի քանակ, հատ» տողը,

-1213 ծրագրի 31003 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Ձեռք բերվող տեխնիկայի քանակ, հատ», «Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ», «Աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բարելավում, տոկոս» տողերը,

-1213 ծրագրի 31004 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Մասնագիտական սարքավորումների քանակ, հատ», «Աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բարելավում, տոկոս» տողերը,

-1213 ծրագրի 31006 միջոցառման արդյունքի չափորոշիչների ներքո հանել «Աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բարելավում, տոկոս» տողը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 112-Ն որոշման NN 2, 3, 4 և 5 հավելվածներում «11009» դասիչը փոխարինել «11006» դասիչով.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 179-Ն որոշման NN 1, 2, 4 և 5 հավելվածներում 1041 ծրագրի «11034. 2022թ. Երևանում կայանալիք բոնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացման ապահովում» միջոցառմանն ուղղվող 77,768.0 հազ. դրամի վերաբաշխումն իրականացնել՝ ներգրավելով (մուտքը և ելքը իրականացնելով) բյուջետային 1139 ծրագրի «11001. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» միջոցառումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, լրացումներ և փոփոխություններ ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 219-Ն որոշմանը կից ներկայացված N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 12 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 277-Ն որոշման 1-ին կետում «NN 1, 2, 3, 4, 5, 6, 7 և 8» թվերը փոխարինել «NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7» թվերով, հանել N 5 հավելվածը, 6-րդ, 7-րդ և 8-րդ հավելվածների համարակալումները փոխարինել համապատասխանաբար՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ համարակալումներով.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 302-Ն որոշման N 3 հավելվածը «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 321-Ն որոշման NN 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում 1190 ծրագրի միջոցառման «11005» դասիչը փոխարինել «11007» դասիչով.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 331-Ն որոշման N 3 հավելվածը «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ, լրացումներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 351-Ն որոշման N 8 հավելվածում 1224 ծրագրի «12004» միջոցառման աղյուսակի «Տրամադրվող աշնանացան ցորենի սերմնանյութի քանակ, կգ» և «Ծրագրի արդյունքում իրականացվող ցանքատարածք, հա» տողերի «առաջին եռամսյակ» և «առաջին կիսամյակ» սյունակներից հանել արդյունքային ցուցանիշները.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 500-Ն որոշման N 3 հավելվածը «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 522-Ն որոշման NN 3 և 4 հավելվածներում 1205 ծրագրի «12007. ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն» միջոցառման «Շահառուների թվաքանակը, մարդ» արդյունքային չափորոշիչը փոխարինել «Սպառողական վարկերից օգտվող շահառուների թվաքանակը, մարդ» արդյունքային չափորոշիչով.

11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ

փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 525-Ն որոշման N 3 հավելվածը «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի «Գեոկոսմոս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գնման գործընթացի առանձնահատկություններ սահմանելու մասին» N 526-Ն որոշման N 2 հավելվածում «2.3» թիվը փոխարինել «2.2» թվով, N 4 հավելվածից հանել «Բաժնետոմսերի քանակը (հատ)» տողը.

13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ ու փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» N 557-Ն որոշման վերնագրի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերը փոխարինել «ՀԱՅԱԼՄԱՍՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերով, 3-4 հավելվածներում 1165 ծրագրի միջոցառման «44001» դասիչը փոխարինել

«44002» դասիչով, ինչպես նաև տեքստը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«1.1. «Հայ-Ալմաստ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնել 50,000,000.0 (հիսուն միլիոն) դրամով՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ընդհանուր հատկացումների շրջանակներում վերաբաշխում կատարելու միջոցով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ներքին բաժնետոմսերի և այլ մասնաբաժին-ների ձեռքբերում» հոդվածով)։».

14) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ ու լրացումներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 623-Ն որոշման N 8 հավելվածի աղյուսակում «7.1.1» թիվը փոխարինել «7.1.2» թվով.

15) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, լրացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 703-Ն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում 1058 ծրագրի «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի հանրային իրազեկման ապահովում» միջոցառման «11004» դասիչը փոխարինել «11007» դասիչով.

16) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին» N 799-Ն որոշման N 5 հավել-վածի 1160 ծրագրի 12003 միջոցառման անվանման «Ծառայությունների մատուցում»

բառերը փոխարինել «Վերականգնողական հաստատություններին վերականգնողական սարքավորումներով ապահովման համակարգում» բառերով, իսկ «ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ» տողը փոխարինել «Այլ ծախսեր» բառերով և «-Այլ ընթացիկ դրամաշնորհներ» բառերը փոխարինել «Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ» բառերով.

17) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 816-Ն որոշման NN 5 և 6 հավելվածներում 1138 ծրագրի 31002 միջոցառման համար սահմանված «Կառուցվող շենքերի և շինությունների ընդհանուր մակերես, քառ. մ» արդյունքային չափորոշիչը փոխարինել «Նախագծահետազոտական փաստաթղթերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչով, իսկ «20,310.0» ցուցանիշը փոխարինել «1»-ով.

18) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը թույլտվություն տալու մասին» N 864-Ն որոշման NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածներում «637,157.66» թիվը փոխարինել «637,157.7» թվով, «87,842.34» թիվը՝ «87,842.3» թվով, «725,000.00» թիվը՝ «725,000.0» թվով, «(725,000.00)» թիվը՝ «(725,000.0)» թվով, N 3 հավելվածում «16,905.65» թիվը փոխարինել «16,905.7» թվով, «237,344.55» թիվը՝ «237,344.6» թվով, «76,629.00» թիվը՝ «76,629.0» թվով, «11,422.45» թիվը՝ «11422.4» թվով, «5,786.79» թիվը՝ «5,786.8» թվով, «289,069.22» թիվը՝ «289,069.2» թվով, «264,769.78» թիվը՝ «264,769.8» թվով, «(340,788.56)» թիվը՝ «(340,788.6)» թվով, «91,604.33» թիվը՝ «91,604.3» թվով, «72,256.80» թիվը՝ «72,256.8» թվով.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 934-Ն որոշման NN 1, 2, 6-8 հավելվածներում 1032 ծրագրի միջոցառման «11012» դասիչը փոխարինել «11014» դասիչով.

20) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 944-Ն որոշման N 3 հավելվածում «Այլ ծախսեր» բառերը փոխարինել «Պահուստային միջոցներ» բառերով.

21) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը գումար հատկացնելու մասին» N 945-Ն որոշման N 2 հավելվածում ներառված «597,312.2» թիվը փոխարինել «597,312.1» թվով.

22) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն ու լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 982-Ն որոշման N 9 հավելվածում «ինն ամիս» սյունակի «(62,500.0)» թիվը փոխարինել «(90,500.0)» թվով, «62,500.0» թիվը փոխարինել «90,500.0» թվով, իսկ «տարի» սյունակի «(90,238.9)» թիվը փոխարինել «(130,238.9)» թվերով, «90,238.9» թիվը փոխարինել «130,238.9» թվով.

23) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 991-Ն որոշման N 3 հավելվածը «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

24) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 994-Ն որոշման N 2 հավելվածում 1224 ծրագրի գործառական դասիչի «02» խումբը փոխարինել «01» խմբով՝ փոխելով խմբի և դասի անվանումները, իսկ «Գյուղատնտեսության խթանման ծրագիր» անվանումը փոխարինել «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր» անվանումով.

25) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1023-Ն որոշման NN 5 և 6 հավելվածներում «1049 Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «11017 Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Քաջարանի թունելի և մոտեցումների համակարգում և կառավարում» միջոցառման «Հողերի օտարում, շահառուների քանակ» արդյունքային չափորոշիչի «Ինն ամիս» սյունակում նշված «(150)» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(200)»-ով, իսկ «11016 Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Սիսիան-Քաջարան 60 կմ-ի համակարգում և կառավարում» միջոցառման «Հողերի

օտարում, շահառուների քանակ» արդյունքային չափորոշիչի «Ինն ամիս» սյունակում նշված «(370)» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(400)»-ով.

26) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 1033-Ն որոշման N 2 հավելվածում «1162» դասիչով տողը հեռացնել, «1162» դասիչը գրելով «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր» տողի դիմաց.

27) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1045-Ն որոշման N 4 հավելվածում «239,000.0» և «(5,712,599.3)» թվերը համապատասխանաբար փոխարինել «230,900.0» և «(5,720,699.3)» թվերով.

28) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1085-Ն որոշման NN 1, 5, 6, 7 և 8 հավելվածներում նշված «(1,687.0)» և «3,437.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «(1,687.5)» և «3,437.5» թվերով՝ կատարելով համապատասխան փոփոխություններ նաև գումարային տողերում.

29) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1108-Ն որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն N 13 հավելվածի.

30) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն ու լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1178-Ն որոշման N 2 հավելվածում «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» բառերը փոխարինել «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» բառերով.

31) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1184-Ն որոշման NN 4 և 5 հավելվածների «Ցուցանիշների փոփոխությունը» սյունակում՝

- 1200 ծրագրի 11003 «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Երեխաների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «8806» թիվը փոխարինել «0» թվով,

-1202 ծրագրի 11001 «Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Հեմոդիալիզի սեանսների թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «11364» թիվը փոխարինել «0» թվով,

-1202 ծրագրի 11004 «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «11949» թիվը փոխարինել «0» թվով, իսկ «Վիրաբուժական միջամտությունների թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «2075» թիվը փոխարինել «0» թվով,

-1202 ծրագրի 11005 «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Սրտի անհետաձգելի վիրահատությունների դեպքերի թիվ, ստենտ» արդյունքային չափորոշիչի «140» թիվը փոխարինել «0» թվով,

-1207 ծրագրի 11001 «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «32307» թիվը փոխարինել «0» թվով,

-1207 ծրագրի 11003 «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «8440» թիվը փոխարինել «0» թվով,

-1207 ծրագրի 11004 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Ֆինանսական համակարգի հաշտարարի բավարարված բողոքների թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «4053» թիվը փոխարինել «0» թվով,

-1207 ծրագրի 11007 «Փոխպատվաստման ծառայություններ» «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Ոսկրածուծի փոխպատվաստում, դեպք» արդյունքային չափորոշիչի «31» թիվը փոխարինել «0» թվով.

32) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1312-Ն որոշման առաջին կետում «կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածների» բառերը փոխարինել «կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7 և 8 հավելվածների» բառերով և վերջինս լրացնել նոր հավելվածով՝ համաձայն N 14 հավելվածի.

33) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1337-Ն որոշման N 6 հավելվածի NN 1 և 2 աղյուսակներում 1023 ծրագրի 11008 միջոցառման արդյունքային չափորոշիչներ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

Մնացորդային հսկիչ նշանների քանակը /հազար հատ/		(500)

».

34) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1341-Ն որոշման N 3 հավելվածում «ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝» տողի «տարի» սյունի «ընդամենը» սյունակի «(35,000.0)», «վարկային միջոցներ» սյունակի «(26,700.0)» և «համաֆինանսավորում» սյունակի «(8,300.0)» թվերը փոխարինել «0» թվով, իսկ «1086 Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում» տողի «տարի» սյունի «ընդամենը» սյունակի «150,000.0» թիվը փոխարինել «185,000.0» թվով, «վարկային միջոցներ» սյունակի

«150,000.0» թիվը՝ «176.700.0» թվով, իսկ «համաֆինանսավորում» սյունակի «0» թիվը՝ «8,300.0» թվով.

35) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ ու լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1349-Ն որոշման 2-րդ կետը «հաջորդող օրվանից» բառերից հետո լրացնել «և տարածվում է 2022 թ.-ի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա» բառերով, իսկ կից հավելվածներից հանել «ինն ամիս» սյունակները.

36) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Ռազմական դրության ժամանակ ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմիններին պատկանող տրանսպորտային միջոցների ներգրավման ժամանակահատվածում տրանսպորտային միջոցներին հասցված նյութական վնասի դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանց համարժեք փոխհատուցում տրամադրելու, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1420-Ն որոշման 2-րդ կետում շարադրված «53,900.0 հազ. դրամ» բառերը փոխարինել «53,922.1 հազ. դրամ» բառերով.

37) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1440-Ն որոշման NN 3 և 4 հավելվածներում 1158 ծրագրի

«11001. Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիթորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառումը փոխարինել «11004. Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառմամբ.

38) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1470-Ն որոշման N 3 հավելվածում՝ 1126 ծրագրի անվանումը փոխարինել «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ»-ով, ծրագրի նպատակը փոխարինել «Մարդու և հանրության առողջության պահպանում, բնակչության առողջության բարելավում, հիվանդությունների կանխարգելում, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցում»-ով, իսկ վերջնական արդյունքի նկարագրությունը՝ «Առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերի ազդեցության և արդյունավետության բարելավում»-ով:

39) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1518-Ն որոշման՝

- N 3 հավելվածում հանել 2.3-րդ կետը.

«

2.3. Ելքերի ֆինանսավորմանն ուղղվող միջոցներ	(20,619,365.2)	(27,534,473.5)

»

և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.6-րդ կետով.

«

2.6. Այլ	(20,619,365.2)	(27,534,473.5)
- Ժամանակավորապես ազատ միջոցներ	(20,619,365.2)	-
- Պետական բյուջեի միջոցների փոփոխություն	-	(27,534,473.5)

»,

- NN 4 և 7 հավելվածներում «1040 Կոշտ թափոնների կառավարում» ծրագրի 42001 միջոցառման «Ինն ամիս» սյունակում նշված «(1,001,008.1)» թիվը փոխարինել «(1,012,008.1)» թվով, իսկ «1167 Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր» ծրագրի 42003 միջոցառման «Ինն ամիս» սյունակում նշված «(1,389,443.6)» թիվը փոխարինել «(1,378,443.6)» թվով,

- N 5 հավելվածում «1040 Կոշտ թափոնների կառավարում» ծրագրի 42001 միջոցառման ինն ամսվա «ընդամենը» սյունակում նշված «(1,001,008.1)» թիվը փոխարինել «(1,012,008.1)» թվով, «վարկային միջոցներ» սյունակում նշված «(839,358.5)» թիվը փոխարինել «(850,358.5)» թվով, իսկ «1167 Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր» ծրագրի 42003 միջոցառման ինն ամսվա «ընդամենը» սյունակում նշված «(1,389,443.6)» թիվը փոխարինել «(1,378,443.6)» թվով, «վարկային միջոցներ» սյունակում նշված «(1,134,144.8)» թիվը փոխարինել «(1,123,144.8)» թվով,

- N 7 հավելվածում «1157 Քաղաքային զարգացում» ծրագրի «42003 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր» միջոցառման «Ինն ամիս» սյունակում նշված «(900)» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(770)»-ով,

- NN 12 և 13 հավելվածներում «1157 Քաղաքային զարգացում» ծրագրի «12014 Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր» միջոցառման «Ինն ամիս» սյունակում նշված «(900)» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(770)»-ով,

- NN 12 և 13 հավելվածներում «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «12001 Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության

հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների դրամաշնորհային ծրագիր՝ երրորդ փուլ» միջոցառման «Ինն ամիս» սյունակում նշված «(7.6)», «(1.2)» և «(470.0)» ոչ ֆինանսական ցուցանիշները հանել, «1049 Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «11012 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգում և կառավարում» միջոցառման «Հեղինակային հսկողություն» արդյունքային չափորոշիչը փոխարինել «Տեխնիկական հսկողություն» չափորոշիչով.

40) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1587-Ն որոշման N 3 հավելվածը «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

41) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 20-ի «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1628-Ն որոշման N 3 հավելվածում՝ 1126 ծրագրի նպատակը փոխարինել «Մարդու և հանրության առողջության պահպանում, բնակչության առողջության բարելավում, հիվանդությունների կանխարգելում, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցում»-ով, իսկ վերջնական արդյունքի նկարագրությունը՝ «Առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերի ազդեցության և արդյունավետության բարելավում»-ով.

42) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1700-Ն որոշման NN 12 և 13 հավելվածներում 1223 ծրագրի 12002 միջոցառման «Արբիտրաժային վարույթների քանակ» տողի «2022թ. տարի» սյան մեջ լրացնել «(3)» թիվը, իսկ «Վճարման հաճախականությունը» տողի 2022թ. տարի» սյան մեջ լրացնել «հանել միանվագ բառը» բառերը.

43) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ ու լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1708-Ն որոշման NN 2, 3, 7 և 8 հավելվածներում 1155 ծրագրի «12003» միջոցառման դասիչը փոխարինել «12004» դասիչով.

44) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1722-Ն որոշման NN 3 և 4 հավելվածները «Առողջական վիճակի բարելավում» բառերից հետո լրացնել «, մարդ» բառով.

45) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու

մասին» N 1729-Ն որոշման N 7 հավելվածում 1060 ծրագրի միջոցառման «11003» դասիչը փոխարինել «11005» դասիչով.

46) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» 1736-Ն որոշման՝

- NN 2 և 5 հավելվածներում «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» և «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով նախատեսված շինարարական աշխատանքները դիտարկել «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով,

- NN 4, 5 և 7 հավելվածներում «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շինարարական աշխատանքների կատարող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի փոխարեն դիտարկել ՀՀ առողջապահության նախարարությունը,

- NN 6 և 7 հավելվածներում (9 հավելվածի 9.8 աղ. և 9.1 հավելվածի 9.1.42 աղ.) «կազմակերպությունների թիվը, որտեղ կատարվում են ներդրումները (հատ)» տողերում 0-ի փոխարեն գրել -2 թիվը, իսկ N 7 հավելվածում «միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» (588,591.4) թիվը փոխարինել (568,591.4) թվով: Միևնույն ժամանակ N 7 հավելվածում լրացնել նոր աղյուսակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման N 9.1 հավելվածի N 9.1.9 աղյուսակում կատարվող 1126 ծրագրի 31003 միջոցառման փոփոխությունների մասով՝ «Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» տողի դիմաց նշելով «20,000.0» թիվը.

47) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1741-Ն որոշման՝

- N 2 հավելվածի աղյուսակի «Ցուցանիշների փոփոխությունները (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)» սյունակում 1202 «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» տողում «-35,000.0» թիվը փոխարինել «(35,000.0)» թվով, 1200 «Մոր և մանկան առողջության պահպանում» տողում «-295,000.0» թիվը փոխարինել «(295,000.0)» թվով, 1200 ծրագրի 11001 «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «այլ նպաստներ բյուջեից» տողում «225,000.0» թիվը փոխարինել «(225,000.0)» թվով,

- NN 3 և 4 հավելվածների «Ցուցանիշների փոփոխությունը» սյունակում 1200 ծրագրի 11006 «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Հղիությամբ ավարտված դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «120» թիվը փոխարինել «0» թվով.

48) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1772-Ն որոշման NN 5 և 6 հավելվածներում 1049 ծրագրի 21008 միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածը կարդալ «Շենքերի և շինությունների շինարարություն».

49) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1817-Ն որոշման՝

- N 2 հավելվածում 1112 ծրագրի ներքո գումարի ավելացման տողում միջոցառման «11001» դասիչը փոխարինել «31001» դասիչով և նույն միջոցառման

անվանման «Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիթորինգի իրականացում» բառերը փոխարինել «Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» բառերով, ինչպես նաև հանել «ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ 576.0» տողը,

- N 6 հավելվածում 1090 ծրագրի «31001 Փրկարար ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման «Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ տարի» արդյունքային չափորոշիչի համար սահմանված «8» թիվը փոխարինել «10» թվով.

50) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1818-Ն որոշման N 8 հավելվածում 1232 ծրագրի 11001 միջոցառման «Թարգմանչական ծառայություններ» և «Ծրագրերի մշակման ծախսեր» բառերը համապատասխանաբար փոխարինել «Վարչական ծառայություններ» և «Համակարգչային ծառայություններ» բառերով.

51) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1819-Ն որոշման NN 1, 2 և 4 հավելվածներում «960,344.3» թիվը փոխարինել «960,344.2» թվով.

52) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու

մասին» N 1836-Ն որոշման N 5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 15 հավելվածի.

53) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1864-Ն որոշման՝

- N 3 հավելվածում «Տարի» սյունակում «2.6 Այլ» և «կայունացման դեպոզիտային հաշվի համալրում» տողերի «20,000,000.0» թիվը փոխարինել «(20,000,000.0)» թվով, իսկ «1.2. Ստացված վարկերի և փոխատվությունների մարում» և «ՀՀ ֆինանսների նախարարություն» տողերի «(20,000,000.0)» թիվը՝ «20,000,000.0» թվով,

- N 8 հավելվածում 1087 ծրագրի «11002 ՀՀ դատախազության պահուստային ֆոնդ» միջոցառման, 1080 ծրագրի «11018 Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում» միջոցառման «Այլ ծախսեր» հոդվածը փոխարինել համապատասխանաբար «Վարչական սարքավորումներ» և «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածներով, իսկ 1115 ծրագրի «11002 Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ» միջոցառման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը՝ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով,

- N 9 հավելվածում «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» տողի «(225,932.7)» թիվը փոխարինել «(225,938.7)» թվով, «(34,401.2)» թիվը փոխարինել «(34,407.2)» թվով, «1023» ծրագրի «31004. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում» միջոցառման տողի «(34,401.2)» թիվը փոխարինել «(34,407.2)» թվով, իսկ նույն միջոցառման «ՀՀ ՊԵԿ-ի Հարավային մաքսատուն-վարչության տարածքում վերանորոգման աշխատանքներ» տողի «(17,991.0)» թիվը փոխարինել «(17,997.0)» թվով,

- N 10 հավելվածում «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» տողի «(225,932.7)» թիվը փոխարինել «(225,938.7)» թվով, 1023 ծրագրի «31004. ՀՀ

պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում» միջոցառման տողի «(34,401.2)» թիվը փոխարինել «(34,407.2)» թվով, «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» տողի «(16,410.2)» թիվը փոխարինել «(34,407.2)» թվով, իսկ նույն միջոցառման «ՀՀ ՊԵԿ-ի Հարավային մաքսատուն-վարչության տարածքում վերանորոգման աշխատանքներ» տողի «(17,991.0)» թիվը փոխարինել «(17,997.0)» թվով,

- NN 15 և 16 հավելվածներում 1034 ծրագրի «11001. Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում և վերահսկողություն» միջոցառումից հանել համապատասխանաբար «1. Տնտեսական մրցակցության իրավիճակը գնահատելու համար կատարված ուսումնասիրությունների թիվ, հատ», «2. Լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային 25 ապրանքների և ծառայությունների ուսումնասիրվող շուկաների թիվը, միջոցառման շրջանակներում ընդգրկված ապրանքային շուկաների ընդհանուր թվի մեջ, տոկոս» և «ԲԳԿ-ի գծով հաստատված բյուջեի նկատմամբ կատարման տոկոսը» տողերը.

- N 15 հավելվածում 1108 ծրագրի 11002 միջոցառման «Գանձապետարանի կողմից սպասարկվող հիմնարկների թիվ, հատ 2930» և «Գանձապետական հաշիվների էլեկտրոնային կառավարման ապահովում, պետական վճարումների էլեկտրոնային համակարգի սպասարկում, տոկոս 100» տողերը հանել, իսկ 1138 ծրագրի 31002 միջոցառման համար սահմանել «Նախագծահետազոտական փաստաթղթերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչը համապատասխան ցուցանիշ սահմանելով «(4)», 1134 ծրագրի 12004 միջոցառման «Տարի» սյան «3,000,000.0» թիվը փոխարինել «300,000.0» թվով,

- N 16 հավելվածից հանել 1086 ծրագրի 12003 միջոցառման դասիչը տողի «Տարի» սյան «2022թ.» տարեթիվը.

54) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն

որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին գումար հատկացնելու» N 1906-Ն որոշման NN 5 և 6 հավելվածներում 1167 ծրագրի 32006 միջոցառման արդյունքային ցուցանիշները նվազեցնել՝ համաձայն N 16 հավելվածի.

55) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1961-Ն որոշման 1-ին կետից հանել «և 12» բառերը, իսկ N 12 հավելվածի վերնագրից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման N 12 հավելվածում կատարվող փոփոխությունները և լրացումները» բառերը, NN 5 և 6 հավելվածների «Ցուցանիշների փոփոխությունը» սյունակում՝

-1200 ծրագրի 11006 «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Հղիությամբ ավարտված դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «120» թիվը փոխարինել «0» թվով,

-1202 ծրագրի 11003 «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ, հատ» արդյունքային չափորոշիչի «9609» թիվը փոխարինել «1409» թվով.

56) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1966-Ն որոշման NN 1, 2, 4 և 5 հավելվածներում

1098 ծրագրի միջոցառման «12006» դասիչը փոխարինել «12007» դասիչով, 1-5 հավելվածներում 1032 ծրագրի միջոցառման «32006» դասիչը փոխարինել «32007» դասիչով.

57) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1979-Ն որոշման NN 4 և 5 հավելվածներում «Տարի» սյունակում կատարել հետևալ փոփոխությունները՝

- 1005 ծրագրի 12001 «Զինծառայողներին, ՀՄՊ մասնակիցներին, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցներին, զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին, ընտանիքներին տրվող պարգևավճարներ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Պարգևավճարներ ստացողների թիվ, ընտանիք» տողի «1008» թիվը փոխարինել «0» թվով,

- 1102 ծրագրի 12001 «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Կենսաթոշակառուների թիվ, մարդ, այդ թվում» տողի «2006.6» թիվը և «հաշմանդամության զինվորական կենսաթոշակառուների թիվը, մարդ» տողի «2006.6» թիվը փոխարինել «0» թվով,

- 1102 ծրագրի 12002 «Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Կենսաթոշակառուների թիվ, մարդ» տողի «35.6» թիվը փոխարինել «0» թվով,

- 1102 ծրագրի 12003 «Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Կենսաթոշակառուների թիվ, մարդ» տողի «8602.8» թիվը փոխարինել «0» թվով,

- 1102 ծրագրի 12004 «ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Կենսաթոշակառուների թիվ, մարդ» տողի «33.4» թիվը փոխարինել «0» թվով,

- 1205 ծրագրի 12001 «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնի «Կենսաթոշակառուների թիվ, մարդ, այդ թվում» տողի «2848.1» թիվը և «ծերության նպաստառուների թիվը, մարդ» տողի «2848.1» թիվը փոխարինել «0» թվով,

- N 6 հավելվածում «1011 11003 Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռքբերում» բաժնի «79571100-1» կոդը, «փոստային առաքման ծառայություններ» անվանումը և «ՄԱ» գնման ձևը փոխարինել համապատասխանաբար «64211130/2» կոդով, «բջջային հեռախոսների ծառայություններ» անվանմամբ և «ԳՀ» գնման ձևով,

- N 7 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 17 հավելվածի.

58) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1988-Ն որոշման N 9 հավելվածում 1104 ծրագրի 11001 միջոցառման «ֆինանսական և ներդրումային աջակցության համար դիմած գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ներկայացրած հայտերի բավարարման չափը, օրինակ տոկոսային արտահայտությամբ սահմանվել է, %» տողում «(10)» թիվը փոխարինել «առնվազն (10)» բառերով.

59) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1990-Ն որոշման N 4 հավելվածի «Տարի» սյունակում «Այլ ծախսեր» բառերը փոխարինել «Պահուստային միջոցներ» բառերով.

60) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և Տավուշի մարզպետարաններին գումար հատկացնելու մասին» N 2037-Ն որոշման NN 6 և 7 հավելվածներում «1004» ծրագրի «31014» միջոցառման արդյունքային չափորոշիչների «Վերականգնվող ջրամբարներ, հատ» տողի «(1.0)» թիվը փոխարինել «0» թվով.

61) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, գնման պայմանագրում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1812-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2043-Ն որոշման NN 6 և 7 հավելվածներում 1075 ծրագրի 21001 և 1168 ծրագրի 32001 միջոցառման արդյունքային ցուցանիշները նվազեցնել՝ համաձայն NN 18 և 19 հավելվածների.

62) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Գեոկոսմոս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գնման գործընթացի առանձնահատկություններ սահմանելու մասին» N 2048-Ն որոշման 1-ին կետում «Երկնային կայանի» բառերը փոխարինել «Երկրային կառավարման կենտրոնի և ընդունիչ կայանի»

բառերով, N 2 հավելվածում «2.3» թիվը փոխարինել «2.2» թվով, իսկ «145,130.0» թիվը՝ «(145,130.0)» թվով, N 4 հավելվածից հանել «Բաժնետոմսերի քանակը (հատ)» տողը.

63) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2050-Ն որոշման N 6 հավելվածում «1,660.6» թիվը փոխարինել «1661»թվով, «38,551.9» թիվը փոխարինել «38,552» թվով և «4,815.1» թիվը փոխարինել «4,815» թվով.

64) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 2052-Ն որոշման՝

- N 4 հավելվածում 1040 «Կոշտ թափոնների կառավարում» ծրագրի և 42001 միջոցառման «(1,078,772.0)» թիվը փոխարինել «(1,078.771.9)» թվով, 1157 «Քաղաքային զարգացում» ծրագրի «(955235.5)» թիվը փոխարինել «(955335.6)» թվով, իսկ 1157 ծրագրի 42001 միջոցառման «(187,222.5)» թիվը փոխարինել «(187,222.6)» թվով,

- N 5 հավելվածում 1040 «Կոշտ թափոնների կառավարում» ծրագրի և 42001 միջոցառման «Ընդամենը» սյունակում «(1,078,772.0)» թիվը փոխարինել «(1,078.771.9)» թվով, «Վարկային միջոցներ» սյունակում «(922,343.0)» թիվը փոխարինել «(933342.9)» թվով, 1157 «Քաղաքային զարգացում» ծրագրի «Ընդամենը» սյունակում «(955,235.5)» թիվը փոխարինել «(955,235.6)» թվով, «Վարկային միջոցներ» սյունակում «(869,927.5)» թիվը փոխարինել «(869,927.6)» թվով, իսկ 1157 ծրագրի 42001 միջոցառման «Ընդամենը» սյունակում «(187,222.5)» թիվը փոխարինել «(187,222.6)» թվով, «Վարկային միջոցներ» սյունակում «(141,059.5)» թիվը փոխարինել «(141,059.6)» թվով,

- N 6 հավելվածում 1040 «Կոշտ թափոնների կառավարում» ծրագրի 42001 միջոցառման «(1,078,772.0)» թիվը փոխարինել «(1,078.771.9)» թվով, իսկ 1157

«Քաղաքային զարգացում» ծրագրի 42001 միջոցառման «(187,222.5)» թիվը փոխարինել «(187,222.6)» թվով.

65) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2058-Ն որոշման՝

- NN 2, 3, 5, 7 և 9 հավելվածներում «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «32001 ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» միջոցառման մեջ ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացվող «20,416.6» և «14,556.6» թվերը փոխարինել «20,416.5» և «14,556.5» թվերով, իսկ «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի համար սրտագրման սարքեր (կարդիոգրաֆներ) տողում «226.6» թիվը փոխարինել «226.5» թվով,

- N 2 հավելվածում «Վարչական սարքավորումների ձեռքբերում» բառերը փոխարինել «Վարչական սարքավորումներ» բառերով,

- N 6 հավելվածում «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «32001 ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» միջոցառման դասիչը և անվանումը փոխարինել «12025 Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» դասիչով և անվանումով,

- N 7 հավելվածի N 9.7 աղյուսակում «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «12025 Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» միջոցառման գծով նշված «716074» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «310728»-ով, իսկ «634,364.0» ֆինանսական ցուցանիշը փոխարինել «208,580.0»-ով, «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «32001 ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» միջոցառումը լրացնել հետևյալ ոչ ֆինանսական ցուցանիշով.

«

Շահառուների թիվը /մարդ/	435220

»,

- N 8 հավելվածի N 9.1.57 աղյուսակում «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «32001 ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» միջոցառման գծով նշված «81000» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «30000»-ով, N 9.1.58 աղյուսակում «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «32001 ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» միջոցառման գծով նշված «81000» ոչ ֆինանսական ցուցանիշը փոխարինել «80874»-ով,

- NN 7 և 8 հավելվածներում «1072» ծրագրի «31010» միջոցառման արդյունքային չափորոշիչները լրացնել «Վերակառուցվող օբյեկտներ, հատ» տողով, նույն տողի «Տարի» սյունակում լրացնել «(5)» թիվը:

6. Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմինների ղեկավարներին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով (այդ թվում՝ նաև սույն որոշմամբ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման (այսուհետ՝ սույն կետում N 2121-Ն որոշում) 3-րդ կետի 3-րդ ենթակետով տրված իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում կատարված վերաբաշխումների, փոփոխությունների և լրացումների արտացոլումն իրենց կողմից ղեկավարվող մարմինների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն սահմանված կարգով ներկայացվող Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունների համապատասխան ծրագրային ցուցանիշներում: Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) N 1 հավելվածի N 2 աղյուսակի և նույն օրենքի այլ աղյուսակների ու հավելվածների, ինչպես նաև N 2121-Ն որոշման N 5 հավելվածի և նույն որոշման այլ աղյուսակների ու հավելվածների միջև ֆինանսական ցուցանիշների գծով և այլ տեխնիկական բնույթի անհամապատասխանությունների առկայության դեպքում, Հայաստանի

Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը կազմելիս՝ առաջնորդվել համապատասխանաբար օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակով և N 2121-Ն որոշման N 5 հավելվածով, իսկ ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշներ և գնումների պլանի ցուցանիշներ սահմանված չլինելու դեպքում՝ նշված հաշվետվություններում նախատեսել նաև ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշները և գնումների պլանի ցուցանիշները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

03.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ